

ԻՆՆԵՐՈՐԴ ՏՍՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

(Ստորագրողացիք գիտնում են ուղղակի
Тифлис. Редакция „Миръ“)

ՄԵԼԻ

Խմբագրատունը բաց է առաւտեան 10—2 ժամ
(Ուղի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեղունով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հէնց մի օր.—Ներքին տեսութիւն: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Հայաստանի մէջ հողատիրութիւն: Խառն լուրեր: Վրացիոն հեռագիրներ: Հայտարարութիւններ: Բանասիրական: Երգերով անգլիական հիւպատոսին զեկուցում:

ՀԵՆՑ ՄԻ ՕՐ

Չը թողցնենք մեզանից. հաշտ սրտով հայ մարդը չէ կարող ապրել Հինգ հայերից երեքը միմեանց ատում են, չորս բաժանաներից երեքը միմեանց պախարակում են, երեք հայ զինուորականներից երեքն էլ միմեանց նախանձում են, երկու ուսուցիչներից երկուսն էլ միմեանց փոս են փորում, երեք աշակերտներից երեքն էլ միմեանց միսն են ուտում...
Հայը անհաշտ է, հայը ատող է, հայը կրքոտ է:
Ուրեմն ինչ անենք. այդպէս ապրենք, երբ հրդեհը բորբոքված

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱՐՏԻՋԱԿՈՒՆԵՐԿԱՆ ՅՈՒՐԵՆՆԵՐԻՆ
ՅՈՒՐԵՆՆԵՐԻՆ ՍՏԱՆԻՍԼԱՎԱՆ, ՁԵՆԿՈՒՅՈՒՄԸ ԹԵՐԹԹԵՐԻՆ

Վսեմափայլ տէր. Ձեր վսեմութեան հրամանին համաձայն, ահա կը յայտնեմ ձեզ իմ այն գիտողութիւնները, որք անուշտ բաւական լոյս պիտի տան թէ ձեզ և թէ նոյա, որք Հայաստանը ուսումնասիրել կը հաճին:

Տեղական թուրք կառավարութեան հրատարակուած վիլայէթիս պաշտօնական աղագահմարը (սալնամէ) ճշգրտութեամբ բոլորովին զուրկ է. և այս ինքնին կը յայտնուի երբ վերջին միջոցին տարւած տախտակները բաղդատութեան դրոշմը, զորօրինակ:

Վանայ միւթէսարիֆութեան թուրքաց թ. 88—89 իսլամ 41722, քրիս. 29828
» » 90 » 49060 » 51482
» » 91 » 128000 » 72679
» » 92 » 128200 » 105429

Կարնոյ միւթէսարիֆութեան թուրքաց թ. 88 իսլամ 86901, քրիս. 29687
» » 89 » 91061 » 25961
» » 90 » 93459 » 28552
» » 91 » 99691 » 29916 և այլն:

Նրզնկայի միւթէսարիֆութեան թուրքաց թ. 92 իսլամ 45997, հայ 10324, յոյս 995
» » 94 » 49028 » 10945 » 995

Պայազեօի միւթէսարիֆութեան թուրքաց թ. 92 իսլամ 22175, հայ 6735
» » 94 » 25889 » 4779 և այլն:

Ինչպէս այս ցուցակէն կը տեսնուի որ Վանայ մէջ իսլամը և քրիստոնեայք չորս տարւան մէջ անսահմանօրէն հեռանալով քառապատկուած են, բայց մի կարծեք թէ թուրք կառավարութիւնը սոյն օրինակ անաչառութիւն ի գործ դրած է,

պատել է հայի տունը, սովը ըսպառնում է ջնջել Մուշ ու Վան, ջնջել Լյորդում...

Վայ այն հային, որ խօսել զիտէ, որ համարձակվում է յայտնել մի միտք, յայտնել մի շորհ, որ զգում է, որ բողբոջում է, որ յորդորում է, որ իր շուրջը կեանք է պահանջում: Այդպիսին ամենքը կը ծաղրեն, կամ կաշխատեն անդունդը գործել...
Բայց սովը ոչ զքին չէ ուզում լսել. նա կըսնում է հայ մանուկներին և նոցա զիսկները կատաղաբար սփռում է Այգեանտանում...

Հայ հարուստը աղքատին մարդ չէ ընդունում, արհամարհում է նրան. աղքատն էլ գուցէ սրտում հարուստին չէ սիրում, բայց վախենում է նրանից, շողորթում է նրան, և ամեն գործի մէջ նրա օրինակին է սպասում: Իսկ մեր հարուստները սառն են, իրանց ձեռքերը չեն

շարժում: Լաւ, բայց բանի սպասենք նրանց օգնութեան... Մօտ է գարունը, մօտ է հեղեղը՝ գաղթականութիւնը: Միթէ երբ Հայաստանը դատարկվեց, յետոյ կը գայ օգնութիւնը...

Թիւրքաց Հայաստանում թիւրք, քիւրդ, եղեզ, այսօրի և հայ, այդ, բոլոր միմեանց մէջ անհաշտ թշնամիները արդէն հաշտվել են: Նրանց հաշտեցրել է ընդհանուր տառապանքը՝ սովը, ամենքն էլ միասին կուռում են ընդհանուր թշնամու, սովի դէմ: Հայաստանի և իրանց կորուստը ուզում են միասին տեսնել:

Իսկ մենք միթէ այդ թշուառութեան վրա անտարբեր աչքով նայենք ու միմեանց դէմ նախանձից զրդված ոչինչ չը սկսենք:

Ինչ կասեն ազգերը, երբ մեզ խորթ լինելով, նրանք էլ են օգնում մեզ. ինչ կասեն, երբ մենք ոչինչ չը ճանաչենք՝ ոչ ազգ, ոչ արին, ոչ լեզու, ոչ հայրենիք...

Իչ ի՞նչ երեսով նայենք մենք նրանց երեսին, դարձեալ պահելով հայի անունը...

Գուցէ վերջնին է այս ճգնաժամը Հայաստանի համար: Մենք էլ հէնց առաջին անգամ մի հրաշք ցոյց տանք. մեծը փոքրին սիրելով, փոքրը մեծին յարգելով, խեղճը յիմարին տանելով, յիմարն էլ խեղճին ճանաչելով, հարուստը աղքատին զթալով, աղքատը հարուստին օգնելով, բոլորն էլ միատեղ, հայ անունը պատուելով, մի ամիս, մի շաբաթ, գոնէ հէնց մի օր միմեանց հետ հաշտվենք, ու ձեռք ձեռքի տուած՝ մեր յոյսը փրկենք:

Աշակերտի դաշտափայրը, Վանի լճի ափերը, Բիւրակնեան բարձրավանդակը հոգեվարքի մէջ մաքառում են սովի դէմ:—Հէնց մի օր բոլորս միմեանց հետ հաշտվենք, հէնց մի օր միմեանք և նրանց օգնենք, ազատենք նրանց սովամահ լինելուց...

Ներով և թուռներով, մինչ զի, մասնաւոր զիւրդօրէս, 150 անձէ բաղկացեալ մէկ տուն տեսնուած է: Հայուն այս տնական վիճակը հարկաւոր է, զի մէկ երկու եղբայրները երբ կը պանդխտին, միմեանք առտնին կամ տեղական գործոց կը զբաղին և այս կերպ պանդխտութիւնը փոխարձակաբար է և հայոց մէջ տարածեալ ամենուրեք: Նոյնպէս հայոց մէջ ամուսնութիւնը նուրբական է և ամուսնանալէ յետոյ ի կենդանութիւն պապին կամ գէթ հօրը հայրենի տնէն զատուելով, զատ մէկ տուն կազմելը ամօթ կը համարուի: Բայց իսլամաց համար այսպէս չէ, զի բաղձնութիւնը չը թողուր բնաւ որ իսլամը այսպիսի կենցաղի մը յարին, այսպէս տեսնուած է որ հայ և թուրք խառն զիւրի մը տասը հայ տան մէջ հարկը անհատէն աւելի կը գտնուի. ջրան իսլամ տան մէջ հազիւ հարկը անձ:

Լը խնդրեմ, Տէր, որ հաճեք սոյն տողերս ներկայել Ձեր այն բարեկամաց և ի հարկին ի ձեռն մամոյ Ձեր մեծ ազգին, որոց համակրանաց զործնական մէկ ցոյցը բաւական է կենդանութիւն տալու այս հայ ազգին, որ դարբեք ի վեր կը նահապտուի, և որոյ կենաց, ընչից և պատուոյ ապահովութիւնը ցարդ իսկ բռնաբարութեամբ է, և այս վիճակը աւելի ևս ծանրացնելու համար սղէտ և մոլեռանդ երիտասարդ թուրք պաշտօնականներ մերթ գաղտնի և մերթ յայտնի կը գործեն, որպէս զի երկիրը հայերէն բոլորովին պարպուի, ու արդի յոռի վարչութիւնը անարգել շարունակուի և եթէ յաջողին, հետեանք ուրիշ բան պիտի չը լինի, եթէ ոչ Հայաստան երկիրն բոլորովին բարբարիկ և վայրենի վիճակի մը դառնալով:

Վիլայէթիս աղագահմարը այս է, որուն ճշգրտութեանը որքան կարելի է հոգ տարած եմ, իմ երեցս վիլայէթիս ամեն կողմերը ըրած այցելութեամբս և աշխարհագրութեամբս ըստ պատրիարքական հրամանին:

Լը խնդրեմ հաճեք այն առթիւն ընդունել իմ խորին յարգանաց հաւաստիք որով մնամ աղօթարար

Վահան վարդապետ Պարաիզակցի

վսեմի երբ աշխարհ գիտէ թէ ի վան հայոց բազմութիւն կայ, անուշտ անհաւատալի պիտի լինի (միմյան իսլամին քառապատկուելը, բայց ուր քրիստոնեայք նուազ ստուար թիւ ունին իսլամ տարրին բաղդատմամբ), սալնամին հոն միայն իսլամին թիւը առաւելուլ նայած է, զորօրինակ, ի Կարնոյ չորս տարւան մէջ, ինչպէս ցուցակէն կը տեսնուի, իսլամը 13000 ի առաւելութիւն ունեցած են, իսկ քրիստոնեայք 229 միայն:

Մինչ սալնամին Նրզնկայի միւթէսարիֆութեան մէջ իրր թէ համեմատական հաշուով մը կանցնի, Պայազեօի մէջ նոյնը չընէր, վսեմի ի Պայազեօ, ուր ոչ հայոց գաղթականութիւն, ոչ պանդխտութիւն կամ մահու կոտորած տեղի չէր ունեցած, այն առան իսլամին թիւը 3714 կառաւելուլ և հայոցը 2000 կը նուազի. զիտեղու արժանի կէտ մալ այս է՝ Նրզնկայի 45997 արու իսլամը երբ երկու տարւան մէջ 3000 արու կառաւելուլ, Պայազեօի 22175 իսլամը մի և նոյն երկու տարւանը մէջ նոյնպիսի և քիչ մալ աւելի 3714 արու կարողութե, իսկ հայը մի և նոյն երկրին մէջ և մի և նոյն վիճակաւ փոխանակ առաւելուլ կը նուազի:

Իսլամաց թուրք կրկնապատկելուն զարմանալի մէկ տեսարանը կը տեսնուի մասնաւոր ստորադաս գաւառաց մէջ. զորօրինակ, Ալբազ, Կոթուր և Մահմուդէ միացեալ գաղմաղմութեան մէջ:

Թուրքաց թ. 88—89 իսլամ 4300, քրիս. 5652
» » 90 » 14500 » 5500
» » 91 » 34500 » 12500
» » 92 » 34500 » 10000

Այս ցուցակին մէջ զիտեղու կէտն այս է որ նախորդ տարւան զիւրդօրէից թիւերը մի և նոյն ըլլալով հանդերձ իսլամաց թիւը անսահմանօրէն առաւելած է:

Բաց աստի մեզ 90 տարին իրը 10000 և 91 տարին 20000-ի առաւելութիւն մը ունեցած է, 92 տարին մէկ առաւելութիւն չէ ունեցած, իսկ հայէն 2500 կը նուազի:

Իսլամաց թուրք այս կրկնապատկութիւնը նոյնպէս կը տեսնուի նաև Բաբերդի գաղմաղմութեան մէջ:

Թրքաց թուական 92 իսլամ 9560
» » 94 » 16499

Թեան անսակեալով մտաբեր եմք առանձին յօդուածի մը մէջ խօսել առաջնորդաց վրայ: 4.—Թէ պէտք է որ Հայաստանի մէջ Հայ- յոց հողատիրութիւնը քաջալերուի և ընդար- ձակուի:

Աւելորդ կը համարուի ասոր հարկն ա- պացուցանել: Աւստի, համառօտել պիտի յի- շեմք այն միջոցները զորս մէք, և մեզ հետ շատեր, յարմարագոյն դատած եմք այդ նը- պատակին հասնելու համար:

Այս միջոցներ են՝
Ա. Հայաստանի Ժողովրդին պանդխտու- թեան առաջին առնուլ:

Բ. Փոխառուութեան և խնայութեան սըն- տուկներ հաստատել Հայաստանի մէջ:

Գ. Հայ դրամատեարց Հայաստանի մէջ հո- ղային առուուր բանալ:

Դ. Ներկադրածական ուսումը զարգացնել Հայաստանի մէջ:

Հարկ չը կայ պանդխտութենէ յառաջ եկած փնտնները թուելու: Հայաստան հայոցմէ կը պարպուի, և պանդխտներն՝ ընդհանուր կերպիւ խօսելով՝ բարոյապէս և նիւթապէս զնուծ վիճակ մը կը ստանան իրենց պանդխ- տութեան վայրերուն մէջ, և շատ անգամ թշուառութեան և խնամոց պակասութեան զոհ կերթան:

Ասոր առաջին առնելու համար պէտք է նախ մեր գաւառաբնակ ազգայնոց միշտ բա- ցատրել պանդխտութեան փնտնները, բանի որ շատերն ոչ թէ 'ի հարկէ' այլ 'ի սովո- րութենէ' մը մղուելով, այդ վիճակին մէջ կը նետեն զիրենք: Բայով անոնց, որք իրապէս հարկէ մը կը ստիպուին, պէտք է Հայաստանի մէջ անոնց գործ գտնելու միջոցը խորհիլ: Նորեւստները կրնան յառաջ տարուիլ. կրո- նագիտութեան և լեզուագիտութեան հետ մասնաւոր խնամք պէտք է տարուի անոնց. բայց մեք առ այժմ ամենապարզ և ամենօգ- տակար միջոց մը պիտի յիշեմք:

Հայաստանի Հայուն ամենամեծ վերքերէն մին վաշխառութիւնն է: Իւր գործն յառաջ ամենուր համար Բրդէն և Թրքէն 100-ին մինչև 100 տոկոս տալով դրամ փոխ առնուլ կը ստիպուի և ծանր տոկոսներու ներքե կը հեծէ: Ընդհանրապէս դրամազրկող չգոյու- թեան պատճառաւ է որ պանդխտութիւն յառաջ կուգայ: Բայց թէ՛ ազգին դրամա- տերներն առ այժմ զոնէ միայն Նարնոյ, Մը- շոյ, Վանայ և Ալինայ մէջ փոխառութեան սնուկներ հաստատեն՝ իւրաքանչիւր քաղա- քի համար զոնէ երեք հազար ոսկի դրամա- զլիով, հարկերաւոր Հայք ոչ միայն դրամա- զուլս գտնելով պանդխտութենէ կամ իրենց հողերը վաճառելէ կազատին, այլ և յօժա- րակամ կրնան սովորականէն աւելի տոկոս ալ վճարել այդ սնուկներուն, և ասկից զատ, Հայ դրամատեարք կրնան իրենց փոխ տուած դրամազուլսը փոխառուաց կալուածներովն ապահովել: Ծահագիտութեան ապահով մի- ջոց մը, որ միանգամայն ազգաշէն գործ մ'է:

Այս փոխառութեան սնուկներուն քով խնայութեան սնուկներն ալ կրնան հաստա- տուիլ այսինքն Հայաստանի Հայոց խնայու- թիւնները տոկոսի մը փոխարէն կրնան առ- նուելով պահպանուիլ, և քիչ մը բարձր տո- կոսով ուրիշ Հայոց փոխ տրուիլ, որք դրա- մազրկող պէտք ունին, որով փոխ տրուելիք դրամազրկող քանակութիւնը կաւենայ, և երբ Հայաստանի Հայոց մէկ մասը խնայու- թիւն ընել կուսնի և անոր օգուտները կը վայելէ, մէկ ուրիշ մասն ալ դրամազուլս կը գտնէ և անով գործ կընէ: Այս միջոցն եթէ 'ի գործ դրուի, Հայաստանի Հայերն իրենց հողերը վաճառելու հարկէն կրնայ ազատել և միւս կողմէն պանդխտութեան դէմ հօգու պա- տուար մը լինիլ:

Հայ դրամատեարց ուրիշ խմբակ մ'ալ կրը- նայ Հայաստանի մէջ հողային առևտուր հաստատել, այսինքն հող գնել խիստ աժան գնով, քանի որ այժմ Հայաստանի մէջ և մա-

նաւանդ Մշոյ արգաւանդ դաշտերուն մէջ հողերն անհատապէս կերպիւ աժան են, և զանոնք աւելի բարձր գնով վաճառել այն Հայ գիւղացւոց, որք սակայն տակաւ առ տակաւ միայն կրնան անոր գինը վճարել, և կամ այդ հողերը վարձու տալ Հայոց, և կամ իրենց հաշուոյն մշակել տալ Հայ երկրագործաց: Մուշէն կը գրեն մեզ թէ այժմ բազում Հայ գիւղացիք, վերջին ծայր աղքատութենէ ըս- տիպեալ, ծիծաղելի դուժարի մը համար ի- րենց հողերը Թրքաց կամ Բրդաց վաճառելու վրայ են, և կը խնդրուի մեզնէ որ այս իրո- ղութիւնն ազգիս դրամատեարց ուշադրու- թեան ներկայեմք: Քիրգիերը մինչև ցարդ Հայաստանի լեռները բռնած էին. այժմ գաշ- տերն ալ կիջնեն՝ Հայ գիւղացւոց աղքա- տութիւնէն օգուտ քաղելով, որք չնչին գու- մարներու համար իրենց հողն անոնց կը վա- ճառեն: Բայց Հայ դրամատեարք և վաճառա- կանք, համեստ գումարներով կրնան այդ հո- ղերն իրենք գնել, և ոչ միայն շահագիտու- թիւն մ'ընել, այլ և ազգին օգտակար ծա- ւայութիւն մը մատուցանել:

Իրաւ է որ այս ամեն ձեռնարկները կա- տարելու համար բարենորոգումներ պէտք են, որպէս զի ապահովութիւն հաստատուի. բայց՝ ճշմարիտը խօսելու համար աւելի հա- լանական է որ Հայաստանի բոլոր Հայ բնա- կիչք երևեն այդ երկրէն, քան թէ կատարեալ ապահովութիւն մը հաստատուի անդ: Բայց ինչո՞ւ չեմք մտածել թէ այդ անբարեկարգ վիճակին մէջ անգամ զազոտի աշխարհավա- րութիւն մը շահ կրնայ ունենալ... Քիչ մ' արի պէտք է լինիլ, առջի բերան դժուա- րութիւն կրնայ գտնուիլ, բայց պէտք է գոր- ծել, յարատեւ գործել. ըստ տնտեսական ա- ռածին, եթէ Հայք իրենք իրենց օգնեն, Աս- տուած ալ կօնի իրենց: Ձեմը ուզեր աւել լի խօսիլ այս մասին, այլ կը բաւականանամ ըսելով թէ՛ մեր ազգն իւր արդի ընթացքով հակայաբայլ կը յառաջդիմէ զէպի ջնջումն իւր գոյութեան: Միայն դպրոցները բաւական չեն այս ազգին գոյութիւնն ու յառաջդիմում- թիւնն ապահովելու համար: Հոգիւր և ա- րուեստներ ալ պէտք են. ազգին նիւթական, շոշափելի շահերն ալ մտածել պէտք է: Հայաստանի զարգացող մէջ լեզու մը պակաս պէտք է աւանդել, բայց արուեստ մ'աւելի ուսուցնել: Ի պրոց և հոգի, լոյս և հարստութիւն, այս պէտք է լինի մեր ազգային նշանաբանը:

Վերջապէս, ամեն միջոց պէտք է ի գործ դնել պանդխտութիւնն արգելելու և Հայաս- տանի մէջ Հայոց հողատիրութիւնը պաշտ- պանելու, քաջալերելու և ընդարձակելու համար:

5.—Թէ պէտք է որ Հայաստանի վանօրէից կալուածներուն պահպանութեան մասնաւոր խնամք տարուի:

Հայաստանի մէջ այժմ 200-ի մօտ վանք կայ, որք ընդարձակ հողեր ունին: Աշխրջու- թեամբ պէտք է հսկել անոնց պահպանու- թեան, և միանգամայն անոնցմէ օգուտ քա- ղելու միջոցները խորհիլ: Կառաւարկեմ 'ի մէջ այլոց, որ ազգին հայն ուսող վանականք իրենք զիրենք քիչ մը հողագործական ուս- մանց տան, և այդ կալուածոց մէջ նոր դը- րութեամբ երկրագործութիւն ուսուցանեն շրջակայ գիւղերու Հայ պատանեաց և երի- տասարդաց:

6.—Վերջապէս պէտք է յանձնախումբ մը կազմել ազգին նիւթական շահուց հսկելու համար:

Այս յանձնախումբին պաշտօնը պէտք է լինի ի մէջ այլոց.

Ա. Պանդխտութիւնն արգելելու համար ա- մեն բարոյական և նիւթական միջոց 'ի գործ դնել:

Բ. Հայաստանի Հայոց հողային դատերը պաշտպանելու համար փաստաբաններ զրկել և ուրիշ ամեն միջոցներով օգնել անոնց:

Գ. Ազգիս սեղանաւորները, վաճառական- ներն ու դրամատէրները քաջալերել իրենց դրամազրկութիւն գոնէ մէկ փոքր մասն Հայաստա- նի մէջ գործածելու:

Դ. Հայաստանի մէջ ծախու հողերը դնել ազգային կալուածք անւամբ, և զանոնք գոր- ծածել թէ իբրեւ տիպար ազարակներ, թէ Հայ գործաւորաց վարձու տալով, և թէ տա- կաւին ուրիշ եղանակներով:

Ե. Ներկադրածական ուսումները քաջալերել և տարածել մասնաւոր Հայաստանի մէջ:

Զ. Ընդհանուր ազգէն, կամ զոնէ կարող դասերէն տարեկան թիւթու տուրք մ'առնուլ՝ ազգին նիւթական շահերն այս և ուրիշ մի- ջոցներով պաշտպանելու համար:

Եթէ այսպիսի յանձնախումբ մը իւր պաշ- տօնը յաջողութեամբ կատարէ, ազգին ուրիշ տան յանձնախումբերէն աւելի օգտակար կը- նայ լինիլ:

Ահա կարգ մը զաղափարներ, իրենց տար- րական վիճակին մէջ ներկայացեալ: Ամեն ազ- զաւորաց ուշադրութեան կը յանձնեմք գա- նոնք: Բաւական վաղեցիք ստուերներու ետե- լէն, պէտք է այժմ իրականութեանց դար- ձնեմք մեր ուշն և ոյժն: Հողագործութիւնն ու արուեստները պէտք է համընթաց յառա- ջանան դպրոցներուն հետ: Եթէ, Հայ ազգը չէ որոշած Հրեական ազգին նմանիլ, այսինքն ե- թէ մտադիր չէ անտարբեր լինիլ իւր հայ- րենի երկրին, միայն դպրոցները չեն բաւեր այդ հայրենի երկրին մէջ իւր գոյութիւնն ապահովելու: Այլ, ըսինք և նորէն կըսեմք թէ ազգին նիւթական և կենսական շահերն ալ պէտք է մեր խորին ուշադրութեան ա- ռարկայ լինին: Դարձեալ պիտի խօսեմք այս խնդրոյն վրա, բայց պէտք է ազգարարեմք թէ խօսելէ աւելի գործել հարկ է՝ եթէ ի- րական նպատակ մը կայ այս ազգը փրկե- լու:

(Մատիս)

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նիսպարայի հերոսը պ. Բլոնդէն, որ Նիսպարայի ջրէնկէցի վրա կապած լարի վրայով անցաւ, նո- լիւրումն եկած էր Վիէննա: Նրա ետեկց եկել է և մի հարուստ լորդ, որը մի անաղին դուժարի պատ է դրել թէ Բլոնդէն մինչև 60 տարեկան հասակն անպատճառ վայր կընկնի լարից, և կը ջախջախի իր գլուխը: Այժմ նա Հայ հրեշտակի նման հետևում է Բլոնդէնին ամեն տեղ: Լորդին մնում է այլ ևս տաք տարի հետեւել պ. Բլոնդէ- նին, որովհետև նա այժմ միայն 50 տարեկան է:

Ջեռնածու Հէրման վաղուց արդէն յայտնի է իր սրամիտ ու ճարպիկ ձեռնածութիւններով. այս օրերս նա մի շատ ծիծաղալար օրամտութիւն գործ դրեց, որը դարձեց իր վրա հասարակու- թեան ուշադրութիւնը: Պատմում են, որ այս օ- րերս Աֆրիկայից չորս զուլուսներ էին եկել փա- լիզ այնտեղ ներկայացուցներ տալու դիտաւորու- թեամբ. նրանք դիմում են Folies-Berger-ի կա- ռալարչին, որը նրանց վարձում է իր թատրոնի համար, և նրանց տանում է ներկայացնելու «Fi- garo» լրագրի խմբագրատանը: Զուլուսները հազ- ված են իրանց հայրենիքի բնական զգեստներով, որը կայանում է մի փոքրիկ կարճ զոգնոցի մէջ, բացի այդ, նրանք զինված են վահանով, նիզակով, նետով և արեղներով, որոնք կազմում են Զուլու- լանդի որդը նուիրական զէնքերը: Հէնց որ նը- րանք մտնում են «Figaro» ի խմբագրատան գեղե- ցիկ զարդարուն դահլիճները, ամենքը միասին վա- զում են դէպի վառարանը ուր վառվում էր կրակը, և որի կողքին նստած էր հռչակաւոր Հէրման: Տեսնելով այդ վայրենիքներ անփոքր մտեղը, նա բոլորովին անտարբեր կերպով մօտենում է զու- լուսներին մէկին, և նրա վահանի հանում է մէկ նարինջ, յետոյ մօտենում է երկրորդին, և նրա նիզակից հանում է մէկ խնձոր, յետոյ մօտենում է երրորդին և նրա քթին հանում է մի ուրիշ նա- րինջ, և այսպէս մի քանի ուրիշ զուարճութիւն- ներ: Վայրենիքները տեսնելով այս բանը բոլորովին

ապշած մի տեսակ կիսաշղան են կազմում պ. Հէրմանի շուրջը, և մի երկու անգամ վայրենիքնե- րից յետոյ ամենքն սկսում են սարսափով փախ- չել: Folies-Berger-ի գլխեկտօրը հազիւ հազ կարո- ղանում է նրանց համոզել, որ պ. Հէրմանի արածը մի դատարկ ձեռնածութիւն-հանք է: Վերջապէս մեծ դժուարութիւններից յետոյ, նրանք համաձայ- նում են վերադառնալ այն կարծեցեալ հրէշի մօտ: Խմբագրատանը նրանց առաջարկում են նարինջ- ներ, խնձորներ և զանազան պտուղներ, բայց նը- րանք այդ բոլորի վրա մի առանձին կասկածանքով են նայում. կարծելով թէ այդ հիւրասիրութեան մէջ թաքնված է մի որ և է դրամա. բայց երբ պ. Հէրման և միւսներն սկսում են ուտել, այն ժա- մանակ, նրանք էլ նոր վստահանում են հետեւել ուրիշներին օրինակին: Folies-Berger-ի զուլուսների առաջին ներկայացումից միայն գոյացաւ 37,450 ֆրանկ:

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՋԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 8 փետրվարի: Բոլոր թագալիրները, պապը և Ֆրանսիական հանրապետութիւնը շնորհաւորեցին Թա- դաւոր Կայսրին, Նրա նոր փառեցից հը- րաշախ կերպով ազատվելու մասին: Գրեթէ ամբողջ եւրօպական մամուլը սարսափով և զը- դուանքով է վերաբերվում զէպի Ձմեռային պա- լատի մէջ փետրվարի 5-ին կատարված նենգա- միտ եղեռնագործութիւնը: Այսօր կատարվեցաւ ձայթիւնից սպանվածների, և վերքերից մեռած ստորաստիճան զինուորականների թաղման հանդէսը:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 8 փետրվարի: Պետական բանկի 50% տոմսին առաջին շրջանի արժէ 93 ր. 50 կ., երկրորդ 93 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 50 կ., հինգերդ 93 ր. 50 կ., առաջին փոխառութեան տոմսին արժէ 225 ր. 50 կ., երկրորդ 227 ր. արեւելեան առաջին փոխառութեան տոմսին արժէ 90 ր. 50 կ., եր- կրորդ 90 ր. 50 կ., երրորդ 90 ր. 50 կ., ոսկին ար- ժէ 7 ր. 66 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լծնրօնի վրա արժէ 25 ր. 50 կ. պէնս. ռուսաց 100 ռուբլ Բերլինի վրա արժէ 219 մարկ 50 պֆ., Համբուրգի վրա—218 մարկ 50 պֆ. և ինչ, Փարիզի վրա 269 ֆրանկ: Տրամադրութիւնը խաղաղ է:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 9 փետրվարի: «Правит- Вѣстѣ» լրագրում տպված է հետեւեալը. «Ձմեռային պալատի փետրվարի 5-ին ձայթիւն առաջացաւ ներքնայարկում: մարդաբնակ տան կամարներն նշանաւոր մասը և վառարանը քանդված են. դռները քարուքանդ են եղած. պահպանողի առաստաղի ներքին կամարի վրա յայտնվեցան երկու ձեղքեր. յատակի մեծ մասը քանդված է. սեղանատան պարիէտը տեղահան է եղել. պատը ձեղքվել է. պալա- տում բաւականին քանակութեամբ ապակի- ներ են ջարդված. քննիչները կարծելով ձայ- թիւնը երկու պուլ գինամիտ քանակու- թեամբ է առաջացած. երևի, ձայթիւնից առաջ, դինամիտը գտնվում էր ներքնայարկի մարդաբնակ սենեակի վառարանի մէջ, կամ վառարանի վրա: Կայսրի ձաշը, որ սովորաբար երեկոյան 6 ժամին է լինում, այդ օրը յետա- ձգված էր մինչև Հէտանեան իշխանի դա- լուստը: ձայթիւնն առաջացաւ վեցից 20 ռուբլ անցած, հէնց այն միջոցին, երբ Կայ- սրը հանդիպեց իշխանին, որը դեռ նոր էր եկել երկրթուղու կայարանից:

ՓԱՐԻԶ, 8/20 փետրվարի: Հաստատ է, որ այստեղ կալանաւորված է ռուսահայտակ Գարուման, որը մեղադրվում է Մօսկվայի եւ- կաթոլիկ վրա գործված եղեռնագործու- թեան մէջ: Պաշտօնապէս պահանջված է, որ մեղադարտին յանձնեն, և այդ պահանջը կը հաստատվի պաշտօնական կերպով:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են Կենտրոնական Գրականա-տնտեսական հետևեալ գրքերը:

Մանկական երգեր Գառնու-Գաթիկայի, կազմած	—	ր.	25	կ.
— նոյնը անկազմ	—	»	15	կ.
Թաւամազ մեղու՝ պատկերազարդ, կազմած թարգ. օր Ն. Տէր-	—	»	40	կ.
Մարկոսեանի	—	»	50	կ.
— նոյնը առանց կազմի	—	»	30	կ.
Վէպեր. Յ. Գրիգորեանցի	—	»	60	կ.
Պէպո. կոմեդիա երեք արարվածով, հեղ. Գ. Սունդուկեանի	—	»	30	կ.
Մօրեա կամ աշխատութիւն, հեղ. Տ. Գառնու-Թարգմ. Գաղիերէնից	1	»	—	կ.
Խորհրդաւոր կղզի, հեղ. Ժ. Վերն 3 հ. թարգ. Գաղիերէնից	4	»	—	կ.
Դիւանայի բլուր. հեղ. Էօթէն Սիւ 2 հ. թարգ. Գաղիերէնից	2	»	75	կ.
Պատանեկան ներշնչումներ, հեղ. Հրանտ Սաստուրի	—	»	60	կ.
Սահմանադրութիւն և հայ ժողովուրդն Հր. Սաստուրի	—	»	35	կ.
Մի կաթիլ արտօր, գոր կը հեղու. Սիւսի հայ միսիրի վրայ	—	»	35	կ.
Խօսք հայրենեաց հեղ. Վ. Վ. Պարտիզանցի	—	»	70	կ.
Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ հեղ. Սրուանձտեանց	1	»	25	կ.
Մանանայ նոր հեղինակի	1	»	75	կ.
Սիրաք և Սամուէլ բարի հօր կրթական գասեր, հեղ. Նորմիան Հայրիկ	1	»	45	կ.
Մարգարիտ արքայութեան երկնից, նոյն հեղ.	—	»	75	կ.
Վանդոմ. կուժ մի ջուր իւր այրած հայրենեաց վերայ կ'արմէ Նոր-	—	»	20	կ.
մեան հայրիկ	—	»	40	կ.
Թէ ինչ շահեցանք Բերլինի վեհաժողովէն, հեղ. Մ. Չերազի	—	»	60	կ.
Հայաստան և Բուսիայ նոյն հեղ.	—	»	50	կ.
Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դասախօսութիւն Ս. Ար-	—	»	—	կ.
ժուռու.	—	»	—	կ.

Հրատարակութիւն Զարմայր Մանրեանի

Փարոս Հայաստանի, պատկերազարդ հանդէս	1	»	—	կ.
Նղայր և քոր Գերմանական վէպ. պատկերազարդ	—	»	30	կ.
Արքայադուռ Գերմանական վէպ. պատկերազարդ	—	»	35	կ.
Հսկայական ձեռքեր Անգլիական վէպ. պատկերազարդ	—	»	10	կ.

Իշխան Բէհրուժեանի Հրատարակութիւններ

Վոյքի իմ վեճեր, Փարս երեք պատկերով Մ. Տ. Գ.	—	»	40	կ.
Բերքեր բիճու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ	—	»	25	կ.
Սխառային երեկոյ զիւղում, վոյքի մէկ արարուածով	—	»	25	կ.
Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով	—	»	40	կ.
Ժանս և Ժանէտ, օպերա-փողովի մէկ գործողութեամբ	—	»	40	կ.
Պառանդներն իրատ. վոյքի մէկ արարվածով Մ. Տ. Գ.	—	»	50	կ.
Տիկինը նրան սպասում է, կատակ երգութիւն մէկ կարա-	—	»	30	կ.
րուածով	—	»	40	կ.
Անանուն կատակ. կատակերգութիւն մէկ արարուածով	—	»	30	կ.
Փակուած դրան մօտ. պատկերամենախօսութիւն	—	»	30	կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասագրքեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուներ, դասական պիտոյքներ ուսումնարաններ և աշակերտների համար. Հայերէն, Ռուսերէն և Գաղիերէն վիպասանութիւններ, ամենայն հատակի ընթերցանութեան և գիտու-թեան զանազան ձևերի վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արա-գութեամբ: Ստորաքաղաքացիք իրանց պահանջները պէտք է ուղարկեն հետևեալ հասցեով ВЪ ГАРЛЕЗ. ВЪ Центральную книжную торговлю

6—10



Կիրակի, յունվարի 27-ից սկսած, Գոռնիբեան փողոցի վրա, ցիրկի մօտ գտնված բաղադանի մէջ կը ներկայացնի Հասարակութեանը երբէք այստեղ չը տեսնված երևոյթ, այն է ՆԻՐՕՊԵՅԻ ԸՈՒՆ-ՋԻՆ ՀՍԿԵՅ ՕՐԻՈՐԴ ԱՄԱԼԻԱ և աշխարհի ամենափոքր ԿԱՐԼԻՆՍԿԻ ՄԱՐԿԻՑ ՀԵՆՐԻԽ ՎՕԼԳԻ և ՄԱՐԿԻՑՈՒՆԻ ԼՈՒԻՑԵ՝ ՏԵ-ղերի գները՝ առաջին տեղեր 50 կոպէկ երկրորդ 30 կոպէկ: Լրելիաները կէսն են վճարում:

4—5

ՍԱԼԻՅԵԼԵԱՆ ԱՏԱՄԻ ԲԺՅԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՏԱՄ-ՆԱԲՈՅԺ ԲԺԺԿ Լ. Ի. ԻՆԵԼԳԻՅՄԻ Թոյլ են տաւ Մօսկվայի ԲՈՂԿԵԼԵՆ ՓԵՆՈՒՄԵՆՏԻՑ: Երբ միջոցները մեծ գործը ԳՐՈՒԹԻՆ ԵՆ գտել և առաջարկվում են իբրև ԱՄԵՆԱԼԱՒ առողջապահական ՄԻՋՈՑՆԵՐ բերանի և ատամների համար: Կարելի է ԱՏԱՄՆԵՐԸ պահպանել ՓՕՇԻՆԵԼԼՈՒՑ, սառեցնում են ԼՕՐՁՈՒՆԻԻ ԲԵՐԸ և վատ ՀՈՏԻ առաջն են առնում:

Ետամաքոյթ բժիշկ Լ. Ի. Եղեղէյի ԳԼԵԼՈՐ ՊԵ-ՀԵՍԵ գտնվում է ՄՕՍԿՎԱՅՈՒՄ ԿՈՒՑՆԵՅԿԻ ԿԵՄՈՒՐՁ, ՍՕԿՈԼՈՎԻ տանը: ԹԻՖԼԻՍՈՒՄ կարելի է գտնել Լ. Մ. ՅՈՒՐԻՆՕՎԻ ԿՈՎ-ԿԵՍԵՆ և անդրկովկասեան գլխաւոր ՊԵՀԵՍՈՒՄ: Նախորդների ՆՇԱՆԱՒՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ:

2—10 (12)

ՆԵՐԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

“ԿԱՅԾԵՐ”

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակ ԿՈԼԹԻՆ ՐԸՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երես-ներ: Լմեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է ԳԵԼԵՆԻՆԻՍՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է գիմել «ՄԵ-ՀԱԿԻ» խմբագրատանը Յ. ՄԷԼԻՔ-ՅԵԿԻՄԵԼԻՆ:

ՀԱՏՏԱՐԱՐ դատարանի 4 բաժնի դատա-տանական ՊՐԻՍԱՎ ՎԱՍԻԼԵՆԿՈ քաղաքային օրէնսդրութեան 1030 յօդուածի համեմատ յայտնում է, որ ՓԵՏՎԱՐԻ 16-ին առաւօ-տեան 10 ժամին, Երևանեան հրապարակի վրա, Թամանշիկի քարվանսարայի մօտ, պոլի-ցիական վարչութեան հանգէպ ԱՃՈՐԴՈՎ, ԿԸ ԵԱՎԻ ԱՅՐԻ ԷՓԵՄԻԱ ՄԱՅԻՆ ՍՈՒՐՈՎ Է շարժական ԿԱՅԻՐԸ, որ բաղ-կացած է զանազան կահ կարանիքից, պա-հարաններից, բուժէտից և այլն և որ գնա-հատված է 148 ր.: ԱՅՐԻ ՄԱՅԻՍՈՒՐՈՎԻ կայքը ծախվում է Ստեպան Պաճարովի 1880 թ. ՊԱՐՏԻ և 1876 թ-ի սկստեմբերի 14-ից սկսած պարտքի 8040ՍԻ և դատա-տանական ծախս 120 ր. ՁԸ ՎԱՍԻԼԵՆԿԱ-մար:

2—3

ՆԻՅՈՒՄԱՅԻՍԻ ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ՌՈՒՍԱՅ ՈՒ-ՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ հարկաւոր է ՎԱՐ-ՁԵԼ չորս մեծ և չորս միջակ սենեակներ մեծ բակով, Հաւաքարում, աւելի ՊՈԿՐՈՎՍԿԻ ԿԱՋԱՐՄԻ մօտերում:

Այդպիսի շինութիւն ունեցողներին խն-դրում եմ շնորհ բերել իշեալ ուսումնարանը, ՊՈԿՐՈՎՍԿԻ ԿԱՋԱՐՄԻ ԴԻՄԱՅ, և խօսակցել պայմանների մասին ուսումնարանի տեսչի հետ, ամենայն օր ճաշից յետոյ 3 ժամից մինչև 7 ժամը երեկոյեան:

2—3

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ՌՈՒՍԱՅ ԲԱՋԱՐԻ և ՀԱՆՎԱ-ԲԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ վրա կառուցված են ԱՌԵՏՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ փարձով տալի համար. ուսաց բաղարի վրա 18 համարներ և Հաւաքարի հրապարակի վրա 40: Յիշեալ շինութիւնները ՎԱՐՁՈՎ վերցնել ՅԱՆՎԱՅՈՎ-ՆԵՐԸ հրաւիրվում են քաղաքային վարչու-թիւնը, որի ԳՐԱՍԵՆԱԿՈՒՄ ամենայն օր, բացի տօն օրերից, առաւօտեան 10 մինչև 2 ժամը երեկոյեան վարձի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ կը յայ-տնվեն:

2—3

С. ПЕТЕРБУРСКІЙ ПОРТНОЙ
ГЕРМАНИ
ОБРАТИТЕ ВНИМАНИЕ

Имѣю честь извѣстить почтеннѣйшую публику, что нынѣ мой магазинъ и масте-рекая находятся на Гановской улицѣ на противъ дома Хосроева, въ новомъ устройствѣ Шахъ-Назарова, только что получено большой выборъ осенней и лѣтней Англійской и Французской мате-рія и также принимаются заказы воен-ныхъ и гражданскихъ костюмовъ по умѣреннымъ цѣнамъ.

2—5

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ՝
1. Երգն կեանց բահանայ—Մանկա-կան երգարան, երգեր և պար-երգեր ընդունված է Ներսիսեան և Գայանեան դպրոցներում: գինն է ր. 20 կ.
2. Մեծատունեանց—Նրբարան աղջ-կանց և աշակերտուհեաց Հայկական ու-սումնարանաց 1 ր. — կ.
3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց—Դիֆտերիա բողազացաւ ր. 25 կ.
4. Բժիշկ Գ. Տէր-Գրիգորեանց—Վա-րակիչ հիւանդութիւններ.
(Մաղիկ, կարմուխ, սկալապտի, բժաւոր տիֆ, անդրադարձ տենդ, դիֆտերիա, ընդ-հատ տենդ, խոլերայ, դեղին տենդ, որովայ-նաւիթի և ժանտախտ):
Սոցա յատկութիւններն, ծագման և տա-րածման եղանակներն և նախապաշտպանո-ղական միջոցներ:

Վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկա-սեան գրականա-տնտեսական:

5—5

Մանուկ բարվանսարան այր-վելուց յետ, նորից բացված է խ-տակ մոմի առևտուր Սիմեան փո-ղոցում Լըժրոնու բարվանսարա-յումը № 14. իւրաքանչիւր շաբաթ ստացվում է նոր շինուած խտակ մոմեր իմ սեփական զաւօղից և որոնք վաճառվում են էժան գնե-րով. խնդրեմ գնողներին չը թող-նել իրենց այցելութիւնները:

Յովաննէս Կուրծեան
2—4

Փետրվարի 12-ից ԿԸ ԲԱՅՎԻ Իշխան ՍՈՒՄ-ԲԱՏՈՎԻ տանը ԿՈՒՐԻՏԵՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (пе-карня) մագաղին «ВАРШАВСКАЯ ПЕКАР-НІЯ» վերնադրով, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմոր և զէնն և ր, նոյնպէս կը վա-ճառվին զանազան տեսակ կօշիկ և տնայնա-րան գնով: Թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՍ ԳՈՐԾԱ-ԲԱՆԻՑ: Օտար քաղաքացիք կարող են դիմել հե-տեալ հասցեով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВ-СКОЙ ПЕКАРНИ Мартироу Ахназарову. Պա-տուէրները կը կատարվին ամենայն ճշգրտեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեղ վրա առնելով: Կօշիկեկանների գինը ֆունտը 40 կոպէկից մինչև 1 ր.:

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ, որ աւարտել է իւր ու-սումն Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ օրիորդաց ԴԻՄԱ-ՋԱՆԵՐԻՑ միին մէջ, ցանկանում է վարժու-հու պաշտօն ստանալ Կովկասի ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ: Պայմանները խնդրու-մը ուղարկել հետևեալ հասցեի. С. Петер-бургъ, Новая улица, домъ № 14 кв. № 10 Хр. Ив. Іоану.

4—5